648. Ես Փիրիպէկս կլայնկնեյցի խաչս եղբաւրն իմ խաչատուր զանա-նաին և ծնողաց իմ. թվ. ՌԻԴ: (1575):

Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 5:

44. ԱՋԱԳԵԿ ԳՅՈՒՂ (ՀԻՆ՝ ԱՋԱՏ)

***649. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ** եկեղեցու շինարարական արձանագրություն, մուտքի բարավորի վրա.*

Կամաւն Աստուծոյ մեք Ագասակայ ժողովուրդս շինեցաք զեկեղեցիս ի հայրապետութեան Տեառն Հակոբայ.

Ծանոթ. *Կաթողիկոսը Հակոբ 4-րդն է,* XVII *դարի* II *կես: Պատերի մեջ ագուցված կան հին տապանաքարեր և խաչքարեր, մեկը՝ 1465 թվ.:*

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 43: Ալիշան, 178:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

***650. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ** եկեղեցու նորոգումների ժամանակ, 1830-ական թվականներին գտնվել են պղնձե սպասներ, որոնց վրա կան հետևյալ երեք արձանագրությունները.*

Յիշատակ է Աղայպակի որդի Կիրակոսին՝ ի դուռն Սուրբ Ստեփաննոսի, թվին ՌՃԻԶ: (1677)

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 43: Ալիշան, 178:

651. Յիշատակ է Շաղոի որդի Մարտիրոսին, Ագասակի Սուրբ Ստեփան-նոսի. թվին ՌՃԾԱ: (1702):

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 43: Ալիշան, 178:

652. Յիշատակ է բուրվառս Շոռութցի Կրիմոի որդի Պետրոսին, որ ետ ի դուռն Ագասակու Սուրբ Ստեփաննոս Նախավկային.

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 43: Ալիշան, 178:

***653. Ս. ՀԱԿՈԲ** մատուռի մեջ. տապանաքարի վրա.*

Յանուն Աստուծոյ, ես՝ աղքատ Մէլիքշահս շինեցի Ս. Ակոբ . . . նա հանգիստ Շամարբէկին, թվին ՌՀԲ: (1623):

Ծանոթ. *Մատուռը գտնվում է գյուղից մոտ երկու կիլոմետր հեռու՝ դեպի հարավ-արևմուտք: Մատուռից հարավ-արևելք, սարալանջին կա մի խաչքար և երեք տապանաքարեր: Խաչքարը կանգնեցրել են Գրիգորը և իր կինը, իրենց որդի Հունան քահանայի հիշատակին, 1222 թ. (ըստ Քաջբերունու և Ալիշանի՝ 1313 թ.):*

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 43: Ալիշան, 178:
Եղիազարյան, Ազիզբեկովի շրջան, 88:

45. ԿՈՐԱԴԻՍ ԳՅՈՒՂ (ՀՆՈՒՄ ԿՈՐՈՏԻՆՔ)

***654. ԵԿԵՂԵՑՈՒ** շինարարական արձանագրությունը.*

Թվ. ՌՃԺԷ: (1668) շին՛ցօ եկեղեցիս անուն Նիկողաոսի, որ գեղով աւխատեցաք:

Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 4: